Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Անդրանիկ Ատոմի Մարգարյանի «Ներառական տնտեսական աճի հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ նրա տարածքային կառավարման միավորումների (մեզանում՝ մարզերի) սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների լուծման հիմնական միջոցը եղել և շարունակում է մնալ տնտեսական աճը: Հատկապես միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում (իսկ այդպիսին է Հայաստանի Հանրապետությունը) տնտեսական աճի կարևորությունը և նշանակությունը պայմանավորված է այդ աճը պայմանավորող ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բազմաբնույթ գործոններով, հանգամանքներով ու պայմաններով:

Հայաստանի Հանրապետությունում անցումը սոցիալիզմից շուկայական հարաբերությունների ուղեկցվեց (իսկ դրանցից շատերը շարունակում են գործել նաև մինչ օրս) այդ զարգացումը դժվարացնող կամ էլ արգելակող հանգամանքներով: Խոսքը վերաբերում է հանրապետության տնտեսակարգի փոփոխությանը, որն իր գրառումը գտավ գործող Սահմանադրության (այն համաժողովրդական քվեարկությամբ ընդունվեց 2015թ.-ի դեկտեմբերի 6-ին)՝ «Տնտեսական կարգը» հոդվածում (այն մասին, որ ՀՀ-ում ձևավորվել է գերազանցապես մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսություն):

Եվ եթե արտադրամիջոցների նկատմամբ սեփականության իրավունքի ձևի փոփոխությունը ընթացավ պետական ծրագրերի իրականացման միջոցով (իսկ այդ գործընթացը շարունակվում է նաև այսօր), ապա բնակչության մի զգալի մասի գիտակցությունը (հայտնի է, որ գիտակցության փոփոխությունը ամենաիներտ, ամենադժվար փոփոխվող մատերիան է) դեռևս շարունակում է մնալ անցումային կարգավիճակում, առավել ևս, որ անցումը համայնավարությունից նոր՝ շուկայական հարաբերությունների ուղեկցվեց աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և

սոցիալ-տնտեսական գործոններով, որոնցից հիմնականներն էին. նախկին Խորհրդային Միության կազմալուծումը և նորանկախ հանրապետությունների ի հայտ գալը, արցախյան պատերազմները և Արցախի Հանրապետության հայաթափումը (2023թ.-ին), Հայաստանի Հանրապետության շրջափակումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, երկրի անվտանգության կորուստը և այն վերականգնելու համար ռազմական ծախսերի շեշտակի ավելացումը, ներքաղաքական իրավիճակի և իշխանության համար ներկուսակցական պայքարի սրումը, կենսապայմանների վատթարացման պատճառով բնակչության արտագաղթը (բավական է նշել, որ վերջին 30 տարների ընթացքում Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակը ոչ թե ավելացել, այլ նվազել է, թեև Արցախից դեպի Հայաստան է արտագաղթել ավելի քան 100 հազար մարդ):

Այսպիսով, չնայած նշված դժվարությունների, երկրում ձևավորվեց մասնավոր սեփականության իրավունքի վրա կառուցված տնտեսություն, որը պետք է ապահովի բնակչության աղքատության (իսկ աղքատության մակարդակը բավականին բարձր է, շուրջ 25%) նվազում՝ հիմնականում ներառական տնտեսական աճի ապահովման միջոցով: Իսկ վերջինիս առաջնահերթ գործիքակազմը հարկաբյուջետային քաղաքականությունն է

Այս ամենը արդիական և պահանջված են դարձնում ատենախոսի հետազոտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է՝ ՀՀ տնտեսական աճի բնույթի ու դրա ներառականությունն ապահովող հիմնական հարկաբյուջետային գործիքակազմերի, մասնավորապես, հարկային և ծախսային քաղաքականության ձևավորված մեխանիզմների ուսումնասիրության հիման վրա առկա հիմնախնդիրների բացահայտումը և իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության գործիքակազմի ու մեխանիզմների բարելավման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Հետազոտության նպատակից բխում են ատենախոսի առաջադրված խնդիրները, որոնք հետևյալն են.

- ուսումնասիրել տնտեսական աճի ներառականության վերաբերյալ առկա հայեցակարգերի էվոլյուցիան, հետազոտել տնտեսական աճի ներառականության և տնտեսությանը հարկաբյուջետային գործիքներով միջամտության տեսամեթոդաբանական մոտեցումները,

- ուսումնասիրել տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող մակրոտնտեսական հիմնարար գործոնների բնույթը և փոխազդեցությունները Հայաստանի Հանրապետությունում,
- հետազոտության շրջանակներում գնահատել տնտեսության օպտիմալ հարկային բեռը ներառական տնտեսական աճի ապահովման տեսանկյունից,
- տնտեսական աճի ներառականության խթանման տեսակետից վերլուծել և գնահատել ըստ հարկատեսակների կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները անհավասարության տեղաշարժերի համատեքստում, առանձնացնել դրանց քանակական պարամետրերը և որակական կողմերը,
- հետազոտել պետական ծախսերի հիմնական կառուցվածքային տարրերի ազդեցությունները տնտեսական աճի ներառականության տեսանկյունից, բացահայտել և պարզաբանել, թե ըստ պետական բյուջեի ծախսային ուղղությունների՝ որ համադրությունն է ապահովում տնտեսական աճի ներառականության բարձր մակարդակը,
- ուսումնասիրել այսպես կոչված «միջին եկամտի ծուղակի» հիմնախնդրի դրսևորումները տնտեսական աճի և հարկաբյուջետային քաղաքականության ներառականության դիտանկյունից,
- վերլուծել ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության բնույթն ու առանձնահատկությունները եկամուտների արդար և համաչափ վերաբաշխման, տնտեսական աճի ներառականության խթանման տեսանկյունից,
- հետազոտել առողջության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրման ազդեցությունը ՀՀ բնակչության եկամուտների ներառական բաշխման ու անհավասարության հաղթահարման համատեքստում,
- ուսումնասիրել ֆիսկալ ապակենտրոնացման դերը հարկաբյուջետային ներառականության համատեքստում, բացահայտել այդ բնագավառում նոր մեխանիզմների մշակման և ներդրման հնարավորությունները,
- հետազոտել ավելացված արժեքի հարկի հետվերադարձի մեխանիզմի ներդրման հնարավորությունները պետական բյուջեի եկամուտների և անհավասարության մեղմման վրա ազդեցությունների տեսանկյունից:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունների և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության տեքստի ծավալը

կազմում է 193 էջ՝ առանց հավելվածների, այն պարունակում է 59 գծապատկեր, 9 աղյուսակ, 142 անուն գրականության ցանկ, 17 համացանցային կայք և 18 հավելված:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ներառական տնտեսական աճի և հարկաբյուջետային քաղաքականության փոխհարաբերությունների տեսամեթոդաբանական հիմնախնդիրները»** գլխում ուսումնասիրվել են տնտեսական աճի վերաբերյալ տեսությունների և վարկածների էվոլյուցիան, քննարկվել են ներառական տնտեսական աճի չափողականության ու գնահատման հիմնական մոտեցումները և պարադիգմալ ուղղությունները: Այս գլխում ատենախոսը վերլուծել և քննարկել է նաև հարկաբյուջետային համակարգի ներառականության հիմնական մոտեցումներն ու հայեցակարգերը:

Ատենախոսության երկրորդ՝ «**Ներառական տնտեսական աճի վրա ՀՀ հարկաբյուջետային համակարգի բաղադրիչների ազդեցությունների վերլուծությունը և գնահատումը**» գլխում ատենախոսության հեղինակը քննարկել է ներառական տնտեսական աճի մակրոտնտեսական հիմնարար ցուցիչների՝ զբաղվածության, ներդրումների և արտադրողականության երկարաժամկետ (2006-2024թթ) փոխազդեցությունները, որոնք գնահատվել են վեկտոր-ավտոռեգրեսիոն (VAR) մոդելավորման գործիքի միջոցով: Նա հիմնավորել է, որ արտադրողականության ազդեցությունը տնտեսական աճի վրա համեմատաբար ավելի ուժեղ է ներդրումների ազդեցությունից և համադրելի՝ զբաղվածության ազդեցություններին: Աշխատանքի այս հատվածում ուսումնասիրվել են նաև տնտեսական աճի վրա տնտեսության հարկային բեռի ազդեցության շարժի միտումները, այդ տեսանկյունից կատարվել են համադրումներ ՀՀ-ին համադրելի՝ «միջին-բարձր» եկամտային խմբում գտնվող երկրների հետ:

Ատենախոսության այս հատվածում հեղինակը էկոնոմետրիկ-տնտեսաչափական VAR մոդելների միջոցով իրականացրել է ներառական տնտեսական աճի համատեքստում ՀՀ-ում գործող հիմնական հարկատեսակների (եկամտային հարկ, շահութահարկ, ավելացված արժեքի հարկ) ազդեցությունների գնահատում:

Ատենախոսության երրորդ՝ **«Տնտեսական աճի ներառականությանը միտված հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման ուղիներն ու հնարավորությունները ՀՀ-ում»** գլխում անդրադարձ է կատարվել

հարկային բեռի օպտիմալ մակարդակի հաշվարկման մեխանիզմին, գնահատվել են պետության ծախսային քաղաքականության ազդեցությունները ներառական տնտեսական աճի ապահովման համատեքստում «միջին եկամտի ծուղակի» հաղթահարման հնարավորություններին: Հետազոտության շրջանակում ընտրվել է պանելային մոդելավորման և ռեգրեսիոն վերլուծության միջոցով հարկեր/ՀՆԱ օպտիմալ մակարդակի գնահատման մեթոդը, որի համար հիմք են ծառայել Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի հրապարակած տվյալների բազաները: Աշխատության այս մասում վերլուծությունն իրականացվել է՝ հաշվի առնելով տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող բազմաբնույթ գործոնների համախումբը:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվել են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների, ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքները, ձևակերպվել են հիմնական եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

Ատենախոսության արդյունքների հավաստիությունը և դրանց գիտագործնական նշանակությունը

Հետազոտության առարկան ՀՀ տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող գործոնների և պայմանների համախումբն է, մասնավորապես՝ հարկաբյուջետային քաղաքականության գործիքների ու մեխանիզմների ազդեցությունները: Հետազոտության օբյեկտը՝ ներառական տնտեսական աճի ապահովմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության մոդելներն ու մեխանիզմները:

Հետազոտության իրականացման համար տեղեկատվական աղբյուր են ծառայել ՀՀ ֆինանսների և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի, այլ պետական մարմինների հասանելի տվյալների բազաները, միջազգային կազմակերպությունների տվյալների շտեմարանները, հայաստանյան և միջազգային տարբեր ընկերությունների վերաբերյալ հաշվետվությունները, տվյալ թեմայով ազգային և օտարերկրյա հետազոտողների հրապարակումները, ուսումնասիրություններն ու վերլուծությունները:

Հետազոտության շրջանակներում կիրառվել են համեմատական ուսումնասիրության և համադրման, համակարգային վերլուծության, ինդուկցիայի և դեդուկցիայի, պատմական և տրամաբանական մեթոդները, վիճակագրական,

մաթեմատիկական հետազոտության տարբեր գործիքակազմերը: Հետազոտության մեջ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունների գնահատման նպատակով օգտագործվել են էկոնոմետրիկ մոդելավորման ու վերլուծության համապատասխան գործիքներ և մեթոդներ:

Ատենախոսության շրջանակներում ձեռք բերված արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության պլանավորման, բյուջետային համակարգի զարգացման գերակայությունների որոշման և այդ ոլորտում անհրաժեշտ իրավաօրենսդրական փոփոխությունների իրականացման համար: Ստացված արդյունքները կարող են օգտագործվել հարկաբյուջետային քաղաքականության մշակման գործընթացների լավարկման և արդյունավետության բարձրացման աշխատանքներում: Արդյունքների որոշ մասը կարող է օգտագործվել մակրոտնտեսագիտության դասընթացներ ներառող կրթական ծրագրերի մշակման և դասավանդման ընթացքում:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը արտահայտվում է հետևյալ հիմնական դրույթներում.

- վեկտորական-ավտոռեգրեսիոն մոդելավորման (VAR) հիման վրա բացահայտվել են ՀՀ տնտեսական աճի, արտադրողականության, զբաղվածության և ներդրումների փոխազդեցությունների երկարաժամկետ միտումները: Ըստ այդմ՝ արտադրողականության ազդեցությունը տնտեսական աճի վրա համեմատաբար ավելի մեծ է ներդրումների ազդեցությունից և համադրելի՝ զբաղվածության ազդեցություններին,
- հաշվարկվել է հարկային բեռի օպտիմալ մակարդակը և հիմնավորվել, որ վերջին երկու տասնամյակների ընթացքում ՀՀ տնտեսության մեջ հարկային բեռի փաստացի մակարդակը շարունակաբար բարձր է եղել դրա գնահատված օպտիմալ մակարդակից, և ՀՀ տնտեսական գործընթացների վրա պետական բյուջեի հարկային ազդակը երկարաժամկետում գերազանցապես կրել է զսպող ազդեցություն, ինչը փոխհատուցվել է խթանող ծախսային քաղաքականությամբ,
- մշակվել է հարկային բեռի օպտիմալ մակարդակի շարժընթացի բազային սցենար և առաջարկվել է սիմուլյացիոն սցենար, որի իրականացումը հնարավորություն կտա միջնաժամկետում հարկային բեռի օպտիմալ մակարդակը հասցնել ՀՀ կառավարության կողմից դիտարկվող թիրախային ցուցանիշին՝ հիմնվելով ընտրված մակրոտնտեսական հիմնարարների և ներառականությունը բնութագրող ցուցանիշների շարժընթացի կանխատեսված համադրության վրա,

➢ պետական բյուջեի եկամտային մասը ձևավորող հիմնական հարկատեսակների և տնտեսական աճի ներառականությունը պայմանավորող հիմնական գործոնների փոխադարձ կապերի վերլուծության համատեքստում մշակվել է սիմուլյացիոն գործիք, որով գնահատվել է եկամտային հարկի պրոգրեսիվ համակարգից համահարթ համակարգին անցման ազդեցությունները եկամուտների համաչափ բաշխման տեսանկյունից՝ հիմնավորելով այն դրույթը, ըստ որի՝ ՀՀ-ում 2020-2023թթ. եկամտային հարկի համահարթ համակարգին անցումը խորացրել է եկամտային անհավասարությունը,

➢ VAR մոդելավորմամբ գնահատման արդյունքում առաջարկվել է հարկային օրենսդրական մեխանիզմ, մասնավորապես՝ վերաներդրվող եկամուտը ձեռնարկատիրական ծախս ճանաչելու և շահութահարկի բազայից նվազեցնելու հնարավորություն, ինչը թույլ կտա որոշակիորեն մեղմել հարկային լծակի բացասական ազդեցությունը ներդրումային նախաձեռնությունների վրա,

➢ գնահատվել է ՀՀ-ին համադրելի «միջին-բարձր» եկամտային խմբում ընդգրկված երկրներում մարդկային զարգացման, ինչպես նաև անհավասարությամբ ճշգրտված մարդկային զարգացման ինդեքսների վրա պետական կրթական և առողջապահական ծախսերի ազդեցությունները և առաջարկվել են ՀՀ-ում ներառամետ ծախսային քաղաքականության նոր մոտեցումներ, որոնք կսահմանափակեն և կնվազեցնեն անհավասարությամբ պայմանավորված մարդկային զարգացման ինդեքսի կորուստները,

➢ գնահատվել է պետական բյուջեի վրա անկանխիկ գործառնություններից որոշակի մասնաբաժնով ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հետվերադարձի մեխանիզմի կիրառման ֆիսկալ ազդեցությունը, մասնավորապես՝ հաշվարկվել և առաջարկվել են ԱԱՀ հետվերադարձի որոշակի սահմանաչափեր և պարամետրեր, որոնց կիրառումը հնարավորություն կտա ապահովել դրական զուտ ֆիսկալ ազդեցությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում տեղ են գտել որոշ բացթողումներ և թերություններ, որոնցից հինականներն են՝

1. «Օգտագործված գրականություն» բաժնում բերված է բավականին հարուստ գրականության ցանկ՝ 159 անվանում, որից հայերեն լեզվով 18-ն է (ընդամենի 11,3%), ռուսերեն լեզվով՝ 4-ը (2,5%-ը), անգլերեն՝ 119-ը (№23-ից №142-ը) (74,8%-ը): Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ներառական տնտեսական աճի ապահովման հարկաբյուջետային

քաղաքականության հիմնախնդիրներին: Հայերեն աղբյուրներում հիմնականում ընդգրկված են ամսագրային հոդվածների հեղինակներ, մինչդեռ մեզանում հրապարակվել են հայ բազմաթիվ հեղինակների աշխատություններ և մենագրային հրատարակություններ, որոնց ներառումը աշխատանքում ավելի հարուստ կդարձներ ատենախոսությունը: Կարծում եմ, ատենախոսություն պաշտպանողներից կարելի է պահանջել, որ այսուհետև ատենախոսություններում գրականության ակնարկի բաժնում հայ հեղինակների (որոնք հրապարակումներ ունեն համապատասխան թեմայով) հրապարակումների, հետազոտությունների վերլուծություն իրականացվի: Այդպիսով ոչ միայն կհարգենք «հայրենական» հեղինակների աշխատությունները և կարժևորենք նրանց ավանդը ուսումնասիրվող հիմնախնդրի լուծման գործում, այլև պատկերացում կունենանք հանրապետության տնտեսության այս կամ այն հիմնախնդրի լուծման վերաբերյալ հայ հեղինակների ուսումնասիրությունների որակի, դրանց խորության և քանակի մասին: Այլապես ինչո՞վ բացատրել որ ատենախոսության Գլուխ 1-ում («Ներառական տնտեսական աճի և հարկաբյուջետային քաղաքականության փոխհարաբերությունների տեսամեթոդաբանական հիմնախնդիրները») չի ներկայացված և ոչ մի հայ հեղինակ, միթե հայ տնտեսագետներից ոչ մեկը այս հիմնախնդրի վերաբերյալ ասելիք չի ունեցել:

Սակայն, որպեսզի այս նկատառումը ստվեր չգցի այս և հաջորդ ատենախոսությունների որակի վրա, կարելի է այս պահանջը գործարկել, օրինակ, 3 տարի հետո պաշտպանության ներկայացվող աշխատությունների համար, և պահանջել որպեսզի նրանց հեղինակները հաշվի առնեն ոչ միայն առանձին հեղինակների՝ թեմային առնչվող հրապարակումները, այլև տարբեր հետազոտական կենտրոնների, ինստիտուտների պլանային հետազոտությունների և մշակումների արդյունքները:

2. Ատենախոսության «2.3.2. Աշխատանքային եկամուտների հարկման և զբաղվածության փոխառնչությունները տնտեսության ներառական զարգացման համատեքստում» ենթաբաժնում «ըստ մոդելի արդյունքի՝ աշխատանքի շուկայի կամ զբաղվածության ինքնցիոն բաղադրիչի էլաստիկությունը 0,3 է, ինչը ենթադրում է աշխատանքի շուկայի որոշակի ճկունության և հարմարվողականության մակարդակի առկայություն, մյուս կողմից ազդակ է ինչպես բիզնեսին, այնպես էլ պետական մարմիններին՝ կատարելագործելու աշխատանքի շուկայի կարգավորման գործիքակազմը ու դրանք համապատասխանեցնելու տեխնոլոգիական փոփոխությունների պահանջներին» (էջ 105-106) եզրահանգումը ճիշտ է, սակայն այն կոնկրետ չէ, որը կարող է ձևակերպվել թե ինչպե՞ս կարելի է

հասնել որոշակի նպատակին: Օրինակ, միջին խավի ավելացմանը ու այդ նպատակակետին հասնելու համար ինչպիսի՞ն պետք է լինի իրականացվող կամ մշակվող քաղաքականությունը բիզնեսի և պետական կառավարման մարմինների կողմից՝ ժամանակային կտրվածքով և ինչպիսի՞ արդյունքներ կարող են ակնկալվել դրանց իրականացման արդյունքում:

3. Ատենախոսության էջ 44-45-ում նշվում է. «Հատկանշական է, որ շուրջ երկու տասնամյակի ընթացքում ՀՀ տնտեսության կառուցվածքային փոփոխությունները չեն հանգեցրել ավելի արտադրողական և ավելացված արժեքի մեծ մասնաբաժին ունեցող ճյուղերի՝ տնտեսական աճի կառուցվածքում ունեցած կշռի մեծացմանը, այլ հակառակը՝ աճի կառուցվածքում հիմնական ազդեցության ոլորտներն են հանդիսացել ծառայությունները և առևտուրը: Ինչ վերաբերում է արդյունաբերության կառուցվածքին, ապա այստեղ ևս իրավիճակը խնդրահարույց է ... »: Թեև առկա են հեղինակի որոշ մեկնաբանությունները, ցանկալի է ստանալ այդ հարցի այլ մեկնաբանությունները, մասնավորապես թե այդ իրավիճակի և դեպքերի նման սցենարով զարգացման գործում ինչպիսի՞ն է եղել շուկայի՝ որպես ինստիտուտի և պետության դերը, որից ելնելով էլ մեկնաբանել, թե ո՞ր ինստիտուտը ի՞նչ պետք է աներ, որ չի արել: Նման ձևով պետք է գնահատական տրվեր նաև ՀՀ-ում իրականացվող շինարարական բումի մասին սկսած 2017թ.-ից: Օրինակ, 2024թ.-ին շինարարության ոլորտում իրականացված աշխատանքների ծավալը գնահատվել է 1,7 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը աննախադեպ է, ինչն էլ ՀՀ-ի տնտեսական աճի կառուցվածքում առյուծի բաժին է կազմում:

4. Ներառական տնտեսական աճի կառուցվածքի մասին խոսելիս կարևոր է նաև ուշադրություն դարձնել դրա օգտագործման արդյունավետության մակարդակի վրա, քանի որ տնտեսական աճի ցանկացած միավորի օգտագործման հնարավորությունը կարող է ինչպես ավելացնել, այնպես էլ նվազեցնել տնտեսական աճի պոտենցիալը: Բանն այն է, որ մեր կողմից կատարված հետազոտության արդյունքներից մեկով, որը վերաբերում է դեպի ծով ելք չունեցող աշխարհի 42 երկրների 2000-2023թթ. միջին տարեկան ՀՆԱ-ի աճի ցուցանիշներին, առաջին տեղը զբաղեցրել են Հայաստանի Հանրապետությունը (6,8%) և Ադրբեջանը (6,8%): Հետաքրքիր կլիներ ատենախոսության հեղինակի կարծիքն այն մասին թե «ու՞ր է գնացել» ՀՀ աճը և ինչո՞ւ այն չի ծառայել երկրի ներառական զարգացմանը ու բնակչության մեծ մասի կենսամակարդակի բարձրացմանը և, մասնավորապես, աղքատության աստիճանի նկատելի նվազեցմանը ու երկրից բնակչության արտագաղթի կանխմանը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներկայացված դիտողություններն ունեն խրախուսական բնույթ և չեն կարող բացասական ազդեցություն թողնել հետազոտության արդյունքների վրա: Անդրանիկ Ատոմի Մարգարյանի ատենախոսությունն ունի տեսամեթոդական և գիտագործնական նշանակություն, գիտական արժեք, ինքնուրույն հետազոտություն է, և հեղինակը լուծել է ատենախոսությունում դրված խնդիրները:

Ատենախոսության հիմնական արդյունքները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 12 (տասներկու) գիտական հոդվածներում, որոնցից 2-ը ներառված են SCOPUS գիտատեղեկատվական շտեմարանում: Հոդվածները ներկայացված են սեղմագրում:

Առաքված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և արտացոլում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Անդրանիկ Ատոմի Մարգարյանի «Ներառական տնտեսական աճի հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Ա.Խ.ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ
ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՊՏՀ գիտական քարտուղար Ն.Հ.ԴԱՐԲԻՆՅԱՆ

9 հունիսի 2025թ.